ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ – ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ. ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Գոմցյան Ա.Դ.*

Ամփոփում: Միջազգային առևտրի ազատականացման գործընթացները, բնականաբար, հանգեցնում են արտաքին առևտրի արգելքների մեղմացմանը կամ դրանց վերացմանը: Այս միտումները, իրենց հերթին, նպաստում են միջազգային տնտեսական գործունեության զարգացմանը, երկրների միջև փոխադարձ տնտեսական հարաբերությունների խորացմանն ու ամրապնդմանը: Երկրների՝ նման սկզբունքներով հետագա համագործակցությունն աստիճանաբար վերաճում է տնտեսական միավորումների ստեղծմանը: Ներկայում աշխարհում հիմնադրվել և գործում են մի քանի տասնյակ միջազգային տնտեսական միություններ, որոնցից են, մասնավորապես, Եվրամիությունը, ԲՌՀՉՀԱ-ն (ԲՐԻԿՍ), Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ), որին և անդամակցում է Հայաստանը: ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցության որոշումն արդարացված և տնտեսապես հիմնավորված քաղաքականության արդյունք է: Դա, նախևառաջ, պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման, տրանսպորտային ուղիների մեկուսացման հաղթահարման, էներգակիրների անխափան ներմուծման, բազմամիլիոն ռուսահայության հետ բազմակողմանի կապերի խորացման, ներդրումային ծրագրերի ավելացման հիմնախնդիրներով: Միաժամանակ, ՀՀ-ի և ՌԴ-ի՝ ԵԱՏՄ հիմնական քաղաքական առաջատարի ու ֆինանսատնտեսական մեծածավալ գործունեություն իրականացնողի միջև արտաքին առևտուրը տարեցտարի աշխուժանում է: Ռուսաստանին է բաժին ընկնում Հայաստանի արտահանման և ներմուծման ծավալների ավելի քան մեկ քառորդ մասը:

Բանալի բառեր. տնտեսական միավորումներ, միջազգային տնտեսական միություններ, արտաքին առևտուր, արտահանման ծավալ, ներմուծվող ապրանքներ, բացասական հաշվեկշիռ, ապրանքախումբ, էներգակիրներ

JEL Classification: F02, F45, F49, Q43.

1. Ներածություն

Աշխարհում XX դարավերջին և XXI դարասկզբին տեղի ունեցող տնտեսական գործընթացներին բնորոշ են միջազգային առևտրի

* Արարատ Դվինի Գոմցյան — ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր, ՌԴ ԳԱԱ գլխավոր գիտաշխատող

առավել ազատականացման երևույթներ, որոնք, բնականաբար, հանգեցնում են արտաքին առևտրի արգելքների մեղմացմանը կամ դրանց վերացմանը: Այս միտումները, իրենց հերթին, նպաստում են միջազգային տնտեսական գործունեության զարգացմանը, երկրների միջև փոխադարձ տնտեսական հարաբերությունների խորացմանն ու ամրապնդմանը: Երկրների՝ նման սկզբունքներով հետագա համագործակցությունն աստիճանաբար վերաճում է տնտեսական միավորումների ստեղծմանը: Ներկայում աշխարհում հիմնադրվել և գործում են մի քանի տասնյակ միջազգային տնտեսական միություններ, որոնցից են մասնավորապես՝

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ (ԵՄ) - Ներկայում ԵՄ-ում ընդգրկված է 27 երկիր, այդ թվում՝ տնտեսապես հզոր այնպիսի պետություններ, ինչպիսիք են Գերմանիայի Դաշնությունը, Ֆրանսիան, Իտալիան և այլն: Մեծ Բրիտանիան երկարաժամկետ բանակցություններից, երկկողմանի օրենքներ ընդունելուց հետո այլևս չի անդամակցում այս միությանը:

ԲՌՀՉՀԱ (ԲՐԻԿՍ) – Բրազիլիա, Ռուսաստանի Դաշնություն, Հնդկաստան, Չինաստան, Հարավաֆրիկյան Հանրապետություն: Աշխարհի բնակչության կեսից ավելին բնակվում է այս միությանն անդամակցող երկրներում:

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ԵԱՏՄ) – Բելառուս, Հայաստան, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան: Այս միությունը գործում է 2015 թ. հունվարից՝ ձևավորվելով նշված երկրների Մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի հիմքի վրա:

Հայաստանի Հանրապետությունը, նախորդ դարի 90-ական թվականներին ձեռք բերելով անկախություն, վարում է տնտեսության ազատականացման քաղաքականություն և աշխարհի բոլոր պետությունների հետ համագործակցության արդյունքում փորձում ձևավորել արտաքին առևտրի փոխշահավետ գործընթացներ: Պատմական այս կարճ ժամանակահատվածում Հայաստանի տնտեսությանը բնորոշ է դինամիկ և բավական բարձր տեմպով առաջընթացը: Իհարկե, ձեռքբերումները նվազեցին 2008 թվականին՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության ճգնաժամով, սակայն հետագա տարիներին Հայաստանի տնտեսությունը կարողացավ հաղթահարել ծառացած դժվարություններն ու աստիճանաբար մտնել վերականգնողական և զարգացման փուլ:

Վերջին ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել են համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճի բարձր տեմպեր: 2019 թվականին նշված ցուցանիշի աճը կազմել է 7, 8 տոկոս,

իսկ բացարձակ ծավալը հասել 13, 35 մլրդ ԱՄՆ դոլարի, որը 2015 թ. համեմատությամբ 27,8 տոկոսով ավելի է: Տնտեսության ընդհանուր աճը, բնականաբար, հանգեցրել է միջազգային տնտեսական հարաբերությունների բարելավմանը և արտաքին առևտրի ծավալների ավելացմանը: Այսպես՝ 2019 թ. արտաքին առևտրի ծավալը կազմել է 8,15 մլրդ ԱՄՆ դոլար, որը 1.7 անգամ գերազանցում է 2015 թ. նույն ցուցանիշը:

2. Վերլուծություն

Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործունեության մեջ իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում ԵԱՏՄ-ն, որին, ինչպես վերը նշեցինք, մեր երկիրն անդամագրվել է 2015 թվականին: ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցության այդ որոշումն արդարացված և տնտեսապես հիմնավորված քաղաքականության արդյունք է, որը, նախևառաջ, պայմանավորված է Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովման, տրանսպորտային ուղիների մեկուսացման հաղթահարման, էներգակիրների անխափան ներմուծման և զարգացման (հիմնականում բնական գազ, նավթամթերք, ատոմային էներգիայի պաշարներ), բազմամիլիոն սփյուռքահայության-ռուսահայության հետ բազմակողմանի կապերի խորացման (բավական է նշել, որ Ռուսաստանը Հայաստանից աշխատանքային միգրանտներ ընդունող թիվ մեկ երկիրն է, և վերջին տարիներին արտասահմանից իրականացվող մասնավոր դրամական փոխանցումների մոտ 80 տոկոսը Ռուսաստանից է), ներդրումային ծրագրերի ավելացման հիմնախնդիրներով:

Անշուշտ, նշվածներից պետք չէ առանձնացնել այն պատմական փաստը, որն իր մեջ ներառում է Հայաստանի ռազմաքաղաքական անվտանգության խնդիրը, տարածաշրջանում առկա բուռն ու անկանխատեսելի զարգացումները, Ռուսաստան պետության դերի ամրապնդումն ու հզորացումն ինչպես միջազգային ասպարեզում, այնպես էլ տարածաշրջանում:

Խոսելով տարածաշրջանում Ռուսաստանի սոցիալ-տնտեսական դերի բարձրացման մասին՝ նշենք, որ 2015-2019 թթ. ընթացքում Ռուսաստանի և Հայաստանի միջև արտաքին առևտուրն աճել է 176 տոկոսով: Միաժամանակ, փոխադարձ առևտուրն ավելացել է նաև ԵԱՏՄ անդամ երկրների միջև՝ հասնելով 69,6 մլրդ ԱՄՆ դոլարի:

Ավելացնենք, որ, բացի արտաքին առևտրի աննախադեպ աճից, անդամ երկրների միջև տեղի են ունեցել նաև սոցիալ-տնտեսական և

այլ բնույթի դրական տեղաշարժեր. ստեղծվել և գործում են բնակչության աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժի պայմաններ, առկա են նախապես հաստատված՝ աշխատանքային ռեսուրսների տեղավորման տարեկան սահմանաչափեր, լուծվել են սոցիալական բնույթի մի շարք հարցեր, մշակվել մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգերի ուսուցման ծրագրեր, լուծվել դիպլոմների փոխադարձ ընդունման, հիվանդների բուժման հետ կապված և այլ բնույթի խնդիրներ: Առաջիկա հինգ տարիների ընթացքում՝ 2020-2025 թթ., կկարգավորվի նաև էներգակիրների, ֆինանսական միջոցների ազատ տեղաշարժի, սակագների (տարիֆների) հաստատման ընդհանուր դաշտը, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակցության միջոցների գործունեության միասնական քաղաքականությունը:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ ԵԱՏՄ անդամ երկրների շարքում հիմնական քաղաքական առաջատարն ու ֆինանսատնտեսական մեծածավալ գործունեություն իրականացնողը Ռուսաստանի Դաշնությունն է: Ըստ 2019 թ. տվյալների՝ արտաքին առևտրի ընդհանուր ծավալում Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամ երկրների հետ առևտուրը կազմել է 2,3 մլրդ ԱՄՆ դոլար, որից 2 մլրդ 210 մլն-ը (93%) բաժին է ընկել Ռուսաստանի հետ իրականացվող արտաքին առևտրին:

Սկսած 2016-2017 թթ.՝ ՀՀ-ՌԴ առևտրի ծավալը հավասարվել է ԵՄ անդամ երկրների արտաքին առևտրի ծավալին: Նշենք, որ 2019 թվականին ՀՀ-ի և ԵՄ-ի միջև իրականացվող առևտրի ծավալը կազմել է 1,73 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև իրականացվող արտաքին առևտրի ծավալը գերազանցել է այս ցուցանիշն ավելի քան 480 մլն ԱՄՆ դոլարով և տարեցտարի ավելացման միտում ունի: Ռուսաստանին է բաժին ընկնում նաև Հայաստանի արտահանման և ներմուծման ծավալների ավելի քան մեկ քառորդ մասը: Նույն՝ 2019 թվականին, Հայաստանի ընդհանուր արտահանման ծավալներում Ռուսաստանի չափաբաժինը կազմել է 27,8, իսկ ներմուծմանը՝ 26,8 տոկոս (2018 թ. համապատասխանաբար՝ 27,7 և 25,3 տոկոս)[1]:

ՀՀ-ՌԴ տնտեսական համագործակցության քաղաքականության մեջ նախևառաջ առանձնանում է այն իրողությունը, որ մեր երկրում օտարերկրյա ներդրումների ծավալներում Ռուսաստանին բաժին է ընկնում դրանց մոտ 40 տոկոսը: ՌԴ մի շարք կորպորատիվ հսկաների են պատկանում հայաստանյան տարբեր փակ բաժնետիրական

[1] Այս և հետագա թվային տվյալները բերված են ՀՀ վիճակագրական կոմիտեի 2015-2020 թթ. տարեկան հաշվետվություններից:

ընկերությունների մինչև 100 տոկոս բաժնեմասերը կամ դրանց երկարաժամկետ կառավարման բացառիկ իրավունքները: Վերջիններիս թվում են, օրինակ, բնական գազի արտադրության, տեղափոխման, արտահանման «Գազպրոմ», Ռուսական երկաթուղային (РЖД), Ռուսաստանի ալյումինի (РОСАЛ), «Ռուսական ատոմ» (РОСАТОМ) և այլ պետական կամ բաժնետիրական ընկերություններ, ինչպես նաև Արտաքին առևտրի բանկը (ВТБ):

Հայաստանը, խոր և բազմակողմանի համագործակցությամբ հանդերձ, նաև որոշակի կախվածություն ունի Ռուսաստանի էներգետիկ համակարգից: ՀՀ և ՌԴ կառավարությունները ստորագրել են մի համաձայնագիր՝ ըստ որի մինչև 2044 թվականը ռուսական «Գազպրոմ» ընկերությանն է վերապահվել ՀՀ գազի մատակարարման և բաշխման բացառիկ մենաշնորհային իրավունքը: «Գազպրոմը» կենտրոնացրել է նաև «Հայռուսգազարդ» ՓԲԸ բաժնետոմսերի 100 տոկոսը:

Երկարաժամկետ, արմատական վերանորոգման, հզորությունների ավելացման հաստատված պայմանագրային հարաբերությունների համատեքստում են գործակցում «Ռուսական ատոմ» պետական ընկերությունն ու Հայկական ատոմային էլեկտրակայանը: Հայաստանի ներքին շուկայի սպառման, այդ թվում՝ պաշտպանական նպատակների համար անհրաժեշտ բենզինի, դիզելային վառելիքի գերակշռող մասը՝ մոտ 95 տոկոս, ներկրվում է Ռուսաստանի Դաշնությունից:

Հայ-ռուսական հարաբերություններում ռազմավարական կարևորագույն խնդիր է համարվում ՌԴ-ում ապրող, սովորող, աշխատող հայության հարցը: Ըստ տարբեր աղբյուրների (ռուսական, հայկական, միջազգային) և մի շարք փորձագիտական գնահատականների՝ հայության թիվն այդ երկրում հասնում է 2,3-ից մինչև 2,7 մլն-ի: Նշենք, որ այդ թվակազմում ընդգրկված են Հայաստանի հետ տարբեր սոցիալական, քաղաքացիական բյուր կապերով հարաբերվող անձինք, ինչպես նաև ՌԴ, ՀՀ քաղաքացիներ և դեռևս քաղաքացիություն չունեցողներ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ ՌԴ-ում բնակվող մեր հայրենակիցների շարքերում քիչ չեն Հայաստանի զինված ուժերում ծառայություն անցած, ինչպես նաև նման ցանկություն ունեցող երիտասարդները: Վերոնշյալ երևույթները հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ հայ հասարակությունը (մասնավորապես՝ դրա մտավորական հատվածը) պետք է ունենա ծրագրավորված տեսակետ, իսկ Հայաստան պետությունը պետք է վարի համակարգված քաղաքականություն՝ մտահոգված լինելով ՌԴ-ում

բնակվող իրենց հայրենակիցների ճակատագրերով: Բնականաբար, նշված խնդիրը մեկ հոդվածի շրջանակում հնարավոր չէ ներկայացնել և կատարել վերջնական եզրակացություն: Սակայն, հարկ է նշել, որ այս մոտեցումները մասամբ տեղ են գտնում հայ-ռուսական ինչպես ընթացիկ, այնպես էլ հեռանկարային ծրագրերում: Միաժամանակ, այս ուղղությունը դարձել է չափազանց արդիական, սոցիալական առումով՝ հույժ կարևոր ու բազմակողմանի ուսումնասիրությունների, ինչպես նաև պետական հոգածության առարկա:

ՀՀ-ՌԴ քննարկվող ծրագրերում ուշադրության կենտրոնում պետք է պահել տրանսպորտային և հաղորդակցության բոլոր տեսակներին վերաբերող խնդիրները: Տնտեսական հարաբերություններում (և ոչ միայն) Հայաստանի դրությունը բարդանում է տրանսպորտային մեկուսացման պատճառով՝ արևելքից Ադրբեջանի (1989 թ. հունիսից), արևմուտքից Թուրքիայի կողմից: Խնդիրն էլ ավելի է սրվել 1992 թվականից ի վեր, երբ վրաց-աբխազական հակամարտությունից հետո չեն գործում Հայաստան-Վրաստան-Աբխազիա-Ռուսաստան երկաթուղային և ավտոտրանսպորտային ճանապարհները: Վերոնշյալ երկու պետությունների կողմից երկարաժամկետ տրանսպորտային շրջափակումը ոչ միայն խոչընդոտում է Հայաստանի տնտեսության զարգացումը, բարդացնում հաղորդակցության հարաբերությունները, այլև հանգեցնում է ներկրվող և արտահանվող ապրանքների տրանսպորտային ծախսերի թանկացմանը: Այսպես՝ Հայաստանից Ռուսաստան և հակառակ ուղղությամբ ապրանքները երկաթուղով տեղ հասցնելու համար պետք է անցնել բարդ, աշխատատար, ժամանակատար մի ուղի (Հայաստան-Վրաստան-Փոթի, Բաթումի նավահանգիստներ, այնուհետև երկաթուղային լաստանավով՝ ՌԴ Կովկասի նավահանգիստ, ապա երկաթուղային ճանապարհով՝ Ռոստով և այլ ուղղություններ), ինչը, իր հերթին, հանգեցնում է տոննա-կիլոմետր տրանսպորտային արժեքի մոտ 24-27 տոկոսով ավելացմանը: Ճանապարհային հաղորդակցության առումով, ՀՀ-ն նման կարգավիճակում է արդեն գրեթե 30 տարի (1989 թ.), և դեռևս անհայտ է, թե որքան կշարունակվի այս իրավիճակը: Դրա լուծումը մեծապես պայմանավորված է նաև վրաց-աբխազական հարաբերություններով, Թբիլիսի - Սուխում երկաթուղու հատվածի ոչ բավարար վիճակով (ավերված կամուրջներ, անհրաժեշտ կառույցների բացակայություն), որի վերականգնման համար բավական ժամանակ և զգալի ներդրումներ են անհրաժեշտ:

Հարաբերությունների զարգացման նույնիսկ լավագույն պայմաններում մոտակա տարիներին չի կարելի ակնկալել, որ երկաթուղային կամ ավտոտրանսպորտային ճանապարհները կվերականգնվեն և անխափան կգործեն: Ահա թե որոնք են հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների վրա ազդող բացասական գործոնները:

ՀՀ արտաքին առևտուրը, ինչպես վերը նշեցինք, աճել է 71 տոկոսով՝ հասնելով 8,15 մլրդ ԱՄՆ դոլարի, այդ թվում՝ Հայաստան-Ռուսաստան արտաքին առևտուրը գրեթե կրկնապատկվել է՝ կազմելով մոտ 2,21 մլրդ ԱՄՆ դոլար: Արդյունքում 2019 թ. դրությամբ ՀՀ արտաքին առևտրի ընդհանուր ծավալում ՌԴ՝ որպես ՀՀ խոշորագույն գործընկերոջ մասնաբաժինը (շուրջ 27,1 տոկոս) շարունակում է պահպանել ծանրակշիռ առավելություն: Միաժամանակ, հարկ է նշել, որ վերջին տարիներին արձանագրվել է արտահանման ծավալների կտրուկ աճ՝ ներմուծման համեմատ: Այսպես՝ 2018 թ. երկու երկրների միջև առևտուրը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 11,2 տոկոսով, այդ թվում՝ արտահանման աճը կազմել է 19,6, իսկ ներմուծմանը՝ 17,4 տոկոս: Չնայած այս ամենին՝ շարունակում է կտրուկ կերպով աճել արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը: Հայ-ռուսական առևտրական հաշվեկշռի բացասական մեծությունը 2019 թ. կազմել է 594 մլն ԱՄՆ դոլար, ինչը նշանակում է, որ մեկ տարում դա ավելացել է 150 մլն-ով:

Հայաստան-Ռուսաստան արտաքին առևտրի ծավալների ու շարժընթացի համատեքստում քննարկենք նաև առևտրային հաշվեկշռի բացասական աճի խնդիրներն ըստ մեր հանրապետությունից ՌԴ արտահանվող հիմնական ապրանքատեսակների: 2019թ. հրապարակված տվյալները, որոնք արտացոլված են 1-ին աղյուսակում, բնորոշ են նաև նախորդ տարիներին:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակում բերված տվյալները, արտահանման կառուցվածքում ամենաբարձր արժեքն ունի թունդ ալկոհոլային խմիչքների (կոնյակ, գինի, օղի) ապրանքախումբը: Միաժամանակ, արդեն երկար տարիներ կոնյակի, գինու, օղու արտահանման ծավալներն ամենամեծն են, ինչն էլ ապահովում է ընդհանուր աճ: Անշուշտ, այս իրողությունը իրավունք է տալիս հաստատելու այն տեսակետը, որ նշված ապրանքախումբը կարիք ունի բազմակողմանի վերլուծության և առանձնահատուկ ուշադրության՝ սկսած խաղողի արտադրության, մշակման, գովազդի, խմիչքների իրացման գործընթացներից, վերջացրած ինչպես ՀՀ, այնպես էլ արտահանվող երկրի տարածքում վարկային և հարկային քաղաքականության հիմնախնդիրներով:

Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվող հիմնական ապրանքատեսակների կառուցվածքը 2018-2019 թթ.

Ընդամենը՝ արտահանվող ապրանքների ծավալը (մլն ԱՄՆ դոլար)	Տվյալ ապրանքների չափաբաժինը (2019 թ.)	Տոկոս	Ընդամենը՝ 2018 թ.	Աճը՝ 2018 թ. համեմատությամբ (տոկոս)
Այդ թվում՝ հիմնական ապրանքատեսակները	735,0	100	665,8	11,0
Թունդ ալկոհոլային խմիչքներ (կոնյակ, օղի, գինի)	207,0	28,2	183,0	13,1
Թեթև և տեքստիլ արտադրության ապրանքներ	116,0	15,8	131,0	-11,5
Բնական և արհեստական աղամանդ, մարգարիտ, թանկարժեք մետաղներ	201,0	27,3	94,5	2,1 անգամ
Սննդամթերքի խմբի ապրանքներ (մրգեր, բանջարեղեն, պահածոներ և այլն)	150,0	20,4	134,0	11,9
Այլ բնույթի ապրանքներ	61	8,3	123,3	-50,6

Որպես վերն ասվածի հաստատում՝ նշենք միայն մեկ հետաքրքրական փաստ. Ռուսաստանը, չհանդիսանալով կոնյակագործության, գինեգործության հայրենիք, միայն 2019 թվականի ընթացքում պետական հեռուստատեսության առաջին ալիքով ամեն շաբաթ հեռարձակվող հատուկ ծրագրում ներկայացրել և գովազդել է ռուսական գինեգործության պատմությունը, ինչպես նաև հումքի մշակմանը, արտադրանքի որակի բարելավմանը վերաբերող խնդիրներ: Միաժամանակ, ՌԴ-ում ընդունվել են գինեգործության զարգացմանը նպաստող դաշնային և մարզային (Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի, Ռոստովի մարզի և այլն) մի շարք օրենքներ: Անշուշտ, անհրաժեշտ է, որ Հայաստանը նույնպես ուսումնասիրի կոնյակագործությամբ և գինեգործությամբ զբաղվող երկրների փորձը՝ հատկապես արտահանմանը նպաստելու և ֆինանսական խրախուսման քաղաքականություն ապահովելու տեսանկյունից:

Արտահանվող ապրանքների կառուցվածքում առանձնակի ուշադրության է արժանի թեթև և տեքստիլ խմբի ապրանքների արտադրության ինչպես բացարձակ ծավալների, այնպես էլ արտահանման աճի տեմպերի ուսումնասիրությունը: Հայաստանն ամբողջ XX դարի ընթացքում՝ մինչև 1988 թ. դեկտեմբերի ավերիչ երկրաշարժը և այնուհետև Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից երկարատև տրանսպորտային շրջափակումը, հայտնի է եղել որպես տեքստիլ և թեթև արդյունաբերության բարձրորակ ապրանքների մեծածավալ արտադրություն և արտահանում ապահովող երկիր: Մեր հանրապետությունում այժմ էլ առկա են այս բնագավառի համար որակյալ ինժեներատեխնիկական մասնագետներ պատրաստող հաստատություններ, մասնագիտական փորձ ունեցող կադրեր:

Վերջին տարիներին ՀՀ-ում իրականացվում են նորամուծություն ապահովող երկրների (Ֆրանսիա, Իտալիա և ԱՄՆ) հետ աշխատանքային փորձի փոխանակման, արդիական ապրանքների ընդօրինակման և ներդրման ծրագրեր: ԵԱՏՄ երկրներ ժամանակակից ապրանքների արտահանման ծավալների ավելացման նպատակով վարվող պետական քաղաքականությունը պետք է միտված լինի այս բնագավառի արտադրող կազմակերպությունների համար բանկային, վարկային, տրանսպորտային փոխադրումների և այլ առումներով բարենպաստ պայմանների ապահովմանը: Անշուշտ, դա, իր հերթին, կհանգեցնի տեքստիլ, կարի, գուլպա-նասկեղենի, կոշիկի և այս խմբի մեջ մտնող այլ, ինչպես նաև առավել մրցունակ, բարձր պահանջարկ ունեցող ապրանքների արտադրության և իրացման խթանմանը:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ Հայաստանից արտահանվող ապրանքների շարքում մեծ է թեթև և տեքստիլ ապրանքատեսակների տեսակարար կշիռը, որոնց արտահանման ծավալները վերջին տարիներին 16-ից հասել են 20 տոկոսի՝ 2017-2018 թթ. ընթացքում ավելանալով 2 անգամ և 2019 թ. գրանցելով զգալի աճ:

Հայաստանից արտահանվող նշված երկու խոշոր ապրանքախմբերի (կոնյակ-գինի ու թեթև և տեքստիլ ապրանքներ) վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք կազմում են արտահանման ողջ ծավալի մոտ կեսից ավելին, ուստի արտահանվող մնացած բոլոր ապրանքախմբերին բաժին է ընկնում նույնպես մոտ կեսը: Հետևաբար, ելնելով ստեղծված իրավիճակից և խթանելու համար հայռուսական արտաքին առևտուրը, հարկավոր է ուսումնասիրել և գտնել նոր ռեսուրսներ ու արտահանման նոր հնարավորություններ:

ՀՀ տնտեսական զարգացման ներկա դրության և հեռանկարների ուսումնասիրությունը վկայում է, որ մեր երկրի վերելքն ու առաջընթացն ապահովող կարևորագույն ուղղությունը եղել և մնում է արտաքին առևտուրը: Այս տեսակետը զարգացնելու առումով, պետք է հաշվի նստել այնպիսի իրական փաստերի հետ, ինչպիսիք են մասնավորապես՝ Հայաստանի ներքին շուկայի սահմանափակությունը, բնակչության գնողունակության դեռևս ցածր մակարդակը, արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը և այլ առանձնահատկություններ:

Եվս մեկ անգամ նշենք, որ 2019 թ. ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը՝ 2,9 մլրդ ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 320 մլն-ով: Ռուսաստանի հետ առևտրում այս ցուցանիշները համապատասխանաբար՝ 744,0 և 150 մլն ԱՄՆ դոլար են:

Ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ 2019 թ. մեր հանրապետության արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի աճի մոտ կեսը (320 մլն ԱՄՆ դոլարից 150 մլն-ը) ՌԴ-ի հետ առևտրի հաշվին է, ուստի այս երկրի հետ արտաքին առևտրի երկու ուղղության (արտահանում, ներմուծում) խոր, բազմակողմանի վերլուծությունը կօգնի կատարել օբյեկտիվ եզրահանգումներ, ինչն էլ հնարավորություն կընձեռի հասնելու հավասարակշռված առևտրային հաշվեկշռի:

3. Եզրակացություն

Արծարծվող խնդիրների լրացուցիչ ուսումնասիրությունը կարևորագույն տնտեսական հիմնահարցերի շարքում դասելու, տևական և հիմնավորված քաղաքականություն վարելու պայմաններում միայն ԵԱՏՄ-ի, մասնավորապես՝ ՌԴ-ի հետ հաստատված տնտեսական հարաբերություններում մեր երկիրն իրական հնարավորություններ կունենա որոշակիորեն կարգավորելու իր արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը: Այս առումով, պակաս կարևոր չէ ՀՀ ներմուծվող ապրանքների ծավալի և կառուցվածքի ուսումնասիրության հարցը: Ըստ 2019 թ. տվյալների՝ ինչպես ԵԱՏՄ-ի կողմից, այնպես էլ Ռուսաստանի կտրվածքով՝ 1,5 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ ներմուծված ապրանքների ավելի քան 1/3 մասը բաժին է ընկնում էներգակիրներին: Նման իրավիճակը բնական է, քանի որ նշված ապրանքախմբի (բենզին, բնական գազ, դիզվառելանյութ, ատոմային էներգիայի հումք) գրեթե ամբողջ ծավալը մատակարարում է Ռուսաստանը: Հաջորդ տեղում, ըստ ներմուծման ծավալի,

պարենային ապրանքների և գյուղատնտեսական հումքի (հացահատիկ, հատիկային կուլտուրաներ և այլն) ապրանքախումբն է (18,5 տոկոս), որին հետևում է մեքենաների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների խումբը (18 տոկոս): Ներմուծվող ապրանքների ծավալներում աճի առավել բարձր տեմպեր են գրանցել էներգակիրները, քիմիական մանրաթելերը, պարենային ապրանքները և գյուղատնտեսական հումքը:

Հարկ է նշել, որ, բացի Ղազախստանի Հանրապետությունից, որն ունի սեփական պաշարներ, էներգակիրների ներմուծման ծավալներով առաջամարտիկներ են Բելառուսը և Ղրղզստանը: Ընդ որում, Բելառուսի դեպքում էներգակիրների տեսակարար կշիռը ներմուծման ծավալներում մոտ 50 տոկոս է, իսկ Ղրղզստանի պարագայում՝ մոտ 42 տոկոս: Ավելացնենք, որ նշված ապրանքների բարձր տեսակարար կշիռը ներմուծվող ապրանքների ընդհանուր ծավալում բնորոշ է նաև 2018, 2017 և մյուս թվականներին:

Առաջին հայացքից թվում է՝ ստեղծված իրավիճակում ներմուծվող ապրանքների կառուցվածքում էներգակիրների բաժնի կրճատման կամ տեղաշարժի հնարավորությունները սահմանափակ են: Սակայն, ինչպես ցույց է տալիս վերջին տարիների համաշխարհային, ինչու չէ, նաև ՀՀ փորձը, այս ուղղությամբ առկա են որոշակի այլընտրանքներ, որոնք անչափ հեռանկարային են և արդյունավետ: Դրանց շարքին են դասվում խնայողության ռեժիմի միջազգային փորձի, էներգիայի ստեղծման նոր աղբյուրների (արևային, հողմային, տերմալ և փոքր հէկեր) ներդրումն ու կիրառումը, ինչը, ըստ մասնագետների ուսումնասիրությունների, կարող է հանգեցնել դասական էներգակիրների մինչև 20 տոկոս կրճատմանը: ՀՀ-ի առումով, էներգիայի այլընտրանքային աղբյուրների համալիր ներդրման շնորհիվ, էներգակիրների ներմուծման ծավալների կրճատումը կարող է նպաստել առևտրի հաշվեկշռի բացասական ցուցանիշի նվազմանը:

Գրականություն
References (with English translation and transliteration)

- Архипов А.Ю., Гомцян А.Д., «ЕАЭС; Взаимодействие России и Армении».
- Журнал « Философия Хозяства», Издательство Московский государственный университет им. Ломоносова N4 (124) июль-август, Москва, 2019 г., стр. 136-145.
- Архипов А.Ю. Взаимодействие и переспективы развития Европейского союза и Евроазийского экономического союза. “Философия хозяства”. Москва 2016, И5, стр. 49-59.
- Գալոյան Դ., Թադևոսյան Ջ., Գոմցյան Ա. (գլուխ 3), Միջազգային տնտեսություն, ուսումնական ձեռնարկ, ՀՊՏՀ, Երևան, Տնտեսագետ, 2018, էջ 80-104:
- Матишов Г.Г., Гомцян А.Д., Степаньян О.В. Армения и Россия совместное решение экологических проблем. 2017, Наука юга России, , Т. 13, №1, стр. 131-134.
- Годовые сборники «Национальная статистическая служба Республики Армения» 2010 год.; 2011г., 2014г., 2018г., 2019г., г. Ереван.
- Սուվարյան Յու. Մ. և ուրիշներ, «Հանրային կառավարան մեթոդաբանական հիմնախնդիրներ», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019:
- Սուվարյան Յու. Մ. և ուրիշներ, «Հանրային կառավարումը Հայաստանի Հանրապետությունում. Զարգացման ընթացքը և բարեփոխման գերակայությունները, Ե., Տնտեսագետ, 2018:

Ընդունված է 10.12.2020
Գրախոսված է 25.2.2021

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ – ЕВРАЗИЙСКИЙ ЭКОНОМИЧЕСКИЙ СОЮЗ (ЕАЭС): ВЫЗОВЫ ВРЕМЕНИ

Гомцян А.Д.

Аннотация. Процессы либерализации международной торговли естественным образом ведут к ослаблению или устранению внешнеторговых барьеров. Эти тенденции, в свою очередь, способствуют развитию внешнеэкономической деятельности, углублению и укреплению взаимных экономических отношений между странами. Дальнейшее сотрудничество стран на таких принципах постепенно превращается в формирование экономических союзов. В мире созданы десятки международных экономических союзов, таких как Европейский Союз, БРИКС, Евразийский Экономический Союз (ЕАЭС), членом которого является Армения. Решение о вступлении в ЕАЭС - результат оправданной и экономически обоснованной политики. В первую очередь, это обусловлено вопросами обеспечения экономической безопасности Республики Армения, преодоления изолированности транспортных маршрутов, бесперебойного импорта энергоресурсов, углублением многогранных связей с миллионами армян в РФ, увеличения инвестиционных программ. В то же время внешнеторговый оборот между Арменией и Россией, главным политическим лидером ЕАЭС и крупным финансово-экономическим оператором, с каждым годом становится все более активным. На долю России приходится более четверти объема экспорта и импорта Армении.

Ключевые слова: экономические ассоциации, международные экономические союзы, внешняя торговля, объем экспорта, импортируемый (импортный) товар, отрицательный баланс, товарная группа, энергоносители

THE REPUBLIC OF ARMENIA - EURASIAN ECONOMIC UNION (EAEU): CHALLENGES OF THE TIME

Gomcyan A.D.

Abstract. International trade liberalization naturally leads to the easing or eliminating of foreign trade barriers. Those tendencies, in turn, spur to the development of international economic activity, the deepening and strengthening of mutual economic relations between the countries. Further cooperation of countries, based on such principles, gradually turns into the formation of economic unions. Dozens of international economic unions have been established and are operating around the world, such as: the Eurpean Union (EU), BRICS, the Eurasian Economic Union (EAEU) (Armenia is a member-state of EAEU). Armenia's decision to join the EEU is the result of a justified, economically sounded policy. First of all, it is conditioned by the issues of ensuring the economic security of the Republic of Armenia (RA), overcoming the isolation of transport routes, uninterrupted import of energy resources carriers, deepening multilateral ties with millions of Armenians living in Russia, increasing investment programs. Meanwhile, the foreign trade between RA and the Russian Federation, the main political leader of the EAEU and a large-scale financial and economic operator, becomes more active every year. Russia accounts for more than a quarter of Armenia's exports and imports.

Keywords: economic associations, international economic unions, foreign trade, export volume, imported goods, negative balance, product group, energy carriers.